



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



բայ

- X1- Գեր. առտար Էջո
- X2- Իր և ծառ իր ցրտ - առ
- X3. Գեր. Ըստե Բուսուցի
- X4- Ըստե Գր- առ և իր ծառ
- X5- Ըստ. Ըստե Գր- առ
- X6- Ըստ Իր և ծառ իր ցրտ - առ
- X7 X8 Ըստ. Ըստ. Ըստ. Ըստ. Ըստ.

- 1- Գեր. առտար Էջո
- 2- Իր և ծառ իր ցրտ - առ
- 3- Ըստե Բուսուցի
- 4- Ըստե Գր- առ և իր ծառ
- 5- Ըստ. Ըստե Գր- առ
- 6- Ըստ Իր և ծառ իր ցրտ - առ
- 7- Ըստ. Ըստ. Ըստ. Ըստ. Ըստ.

333.13
6-60

35 FEB 2010 106

22

«Յառաջ»-ի գրադարան

№ 22

Handwritten signature

Լ. ՇԻՇԿՈ

360 174

ԸՆԴՐԵՆ

809

ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՐՑԸ

ԵԻ

ԳԻՏԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄԻ

ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

277

ԳՐԱԳՐ. ՌՈՒՍ. Խ. ԿԱՐՁ.

(Արևմ: 3063)



1906
ԹԻՖԼԻՍ

22 MAR 2013

25.574

Handwritten signature



Handwritten note: ԿՐԹԱՅԻՆ

Սօցիալիստական կուսակցության ծրագրի ագրարային մասը չի կարելի դատել նրա ընդհանուր ծրագրից ու այնպես քննել, քանի որ հենց ինքը ագրարային սօցիալիստական շարժումը կազմում է երկրի ընդհանուր սօցիալիստական շարժման մի մասը՝ միշտ կապված է նրա հետ սնփակտելի կապերով:

Այդ պատճառով էլ ամեն մի ագրարային ծրագիր պետք է կառուցված լինի նոյն ընդհանուր պատմական կոնցեպցիայի վերայ, սօցիալիստական շարժման զարգացման պայմանների մասին ունեցած նոյն ընդհանուր հասկացողութիւնների վերայ, որոնց վերայ հիմնուում է ներկայումս այս կամ այն սօցիալիստական կուսակցութեան ամբողջ ծրագիրը:

Իսկ որովհետեւ իւրաքանչիւր սօցիալիստական կուսակցութեան ծրագիր վերջ ի վերջոյ ներկայացնում է իրենից մասսային բանւորական շարժման ծրագիր, որին գալիս յանգում է իւրաքանչիւր սօցիալիստական շարժում իր զարգացման ձևով, ուրեմն և պարզ է, որ ագրարային սօցիալիստական ծրագիրը անհրաժեշտօրէն իրենից պետք է ներկայացնէ մասսային բանւորական շարժման ծրագիր գիւղատնտեսական արտադրութեան շրջանում:

Բայց այստեղ մենք, ինչպէս յայտնի է, հանդիպում ենք այսպէս կոչւած գիւղացիական հարցին, որի ծագումը առաջացաւ այն առանձնակի պատմական և մի նշանաւոր չափով նոյնպէս և այն տնտեսական պայմանների շնորհիւ, որոնց մէջ դրւած էին գիւղի բանւորական մասսաները՝ համեմատած քաղաքային բանւորական մասսաների հետ:

Յայտնի է, որ այդ բոլոր առանձնայատկութիւնների շնորհիւ, արեւմտա-եւրոպական սօցիալիստական գրականութեան իշխող հոսանքի մէջ, դեռ անցեալ դարի 40-ական թւականների վերջերում, կազմւեց գիւղացիական մասսաների վերաբերմամբ այն առանձին հայեացքը, որի համաձայն, նորքա, իրենց տնտեսա-

Թ Ի Ֆ Լ Ի 2

Երեւանի սպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ. Մաղաթեան փողոց. № 5. 1906



57113-66

կան ու հասարակական գիրքով, ճանաչեցին անընդունակ՝ սօցիալիստական շարժման մէջ որևէ մասնակցութիւն ունենալու: Իրա բնական հետեանքն այն եղաւ, որ ինչպէս և պէտք էր սպասել, արեւմտա-եւրոպական սօցիալիստական կուսակցութիւնները սկզբնական ծրագիրները մէջ միանգամայն բացակայում էր սօցիալիստական ագրարային որևէ ծրագիր: Քանի որ ենթադրուում էր, որ գիւղում չկան այնպիսի բանւորական մասսաներ, որոնց մէջ կարող էր առաջանալ լուրջ սօցիալիստական շարժում, բնական էր, որ չէր էլ կարող լինել գիւղի մասսային բանւորական շարժման ծրագիր: Այդ պատճառով էլ արեւմտա-եւրոպական սօցիալիստական ծրագրերի ամբողջ ագրարային բաժինը միայն նրա մէջ էր կայանում, որ յիշուում էր հնարաւոր մասնակցութիւնը քաղաքային բանւորական շարժման մէջ՝ նաև գիւղում՝ եղած պրօլետարիատի, այսինքն խոշոր գիւղական տնտեսութիւնների մէջ աշխատող և հողագործ մշակները:

Այն ինչ, պատմական հանգամանքների շնորհիւ, արեւմտա-եւրոպական երկրների մեծ մասի տնտեսական զարգացման ամբողջ ընթացքը բերեց-հասցրեց մի այնպիսի դրութեան, որ, մինչև անգամ նրանցից արդիւնաբերութեամբ ամենազարգացածների մէջ, գիւղի գլխաւոր աշխատաւոր մասսան կազմում էր, ինչպէս և մինչև հիմա էլ կազմում է, ոչ թէ գիւղական հողազուրկ պրօլետարիատը՝ խօսքիս բուն մտքով, այլ սակաւահող, մանր գիւղացիութիւնը: Միւս կողմից էլ իրերի այդ դրութիւնը, ինչպէս փորձից երևաց, ցոյց չէ տւել և ցոյց չէ տալիս մինչև հիմա ոչ մի նշան թէ նա քիչ թէ շատ վճռական կերպով թեքուում է դէպի մանր գիւղացիական տնտեսութեան ոչնչացումը և գիւղական պրօլետարիատի թւի համապատասխան աճումը: Իզուր չէր գրոււմ էնգելսը, անցեալ դարի 90-ական թւականների կիսում, այսինքն արդէն կէս դար անց այն ժամանակից, երբ առաջին անգամ ձևակերպեց դէպի գիւղացիական մասսան կազմած այդ բացասական վերաբերմունքը, որ «Իրլանդիայից մինչև Սիցիլիա, Անդալուզիայից մինչև Ռուսաստան և Բուլգարիա գիւղացիութիւնը հանդիսանում է ինչպէս ամբողջ ազգաբնակչութեան, նոյնպէս և արտադրութեան ու քաղաքական ոյժի խիստ էական ֆակտոր»:

Այդպիսով աստիճանաբար ստեղծոււմ էր սօցիալիստական

շարժման տեսականի ու գործնականի միջև այն անհամապատասխանութիւնը, որը և կազմում է այսպէս կոչւած գիւղացիական հարցի էութիւնը: Այդ անհամապատասխանութիւնը, ինչպէս տեսանք, նրանումն է, որ սօցիալիստական շարժումը, որը իր էութեամբ ամենից առաջ պէտք է լինի մասսային բանւորական շարժում, հանդիպում է իր այնպիսի տեսական մեկնաբանութեան, որի շնորհիւ նա չէ կարողանում իր ծրագրում ընդգրկել եղած բանւորական մասսաների նշանաւոր, շատ անգամ նոյնիսկ ամենազլխաւոր մասերը:

Ինչ չափով էլ որ այդպիսի բացայայտ անհամապատասխանութիւնը իւրաքանչիւր սօցիալիստական շարժման ամենահիմնական պայմանի և նրա տեսական մեկնութեան միջև բաւարարութիւն տար ժամանակի զուտ գործնական պահանջներին, ինչ չափով էլ որ դա համապատասխանէր այն գլխաւոր ուղղութեան, որով զարգացել է որոշ պատմական շրջանում մասսային բանւորական շարժումը, այնուամենայնիւ, ոչ մի կասկած չէր կարող լինել, որ այդ անհամապատասխանութիւնը պէտք է աւելի ու աւելի երևան հանէր այդպիսի տեսական մեկնութեան անկարողութիւնը, աւելի ու աւելի հերթական դարձնէր մասսային բանւորական շարժման ընդլայնման և նրա տարածման հարցը գիւղի աշխատաւոր մասսայի վերայ, ուրիշ խօսքերով սօցիալիստական ագրարային ծրագրի հարցը:

Այդպէս, մենք տեսնում ենք, որ սօցիալիստական ագրարային ծրագրի հարցը սերտ կերպով կապւած է սօցիալիստական շարժման զարգացման հարցի հետ, այդ շարժումը դեռ կուսական բանւորական մասսաների մէջ տարածելու, դեռ չգրաւած, նոր շրջանների մէջ մտնելու հարցի հետ: Իրա հետ միասին սօցիալիստական ագրարային ծրագրի հարցը սերտ կերպով կապւած է գիտական սօցիալիզմի կանխօրէն հաստատած մի քանի տեսական դրութիւնների վերաբնութեան հարցի հետ, այսինքն նա միևնոյն ժամանակ հանդիսանում է նաև տեսական նոր հարց: Սօցիալիստական շարժումը մտնելով իր ընդարձակման նոր շրջանը՝ անհրաժեշտօրէն ենթադրում է այս դէպքում իր առաջւայ տեսական մեկնութեան մէջ էական փոփոխութիւններ և ուղղումներ, այսինքն, զարգացման նոր ֆազիսի մէջ է մտնում նոյնպէս և ինքը՝ սօցիալիստական վարդապետութիւնը: Այդպիսով այս

դէպքում տեսականը բնական ճանապարհով հետևում է գործնականին ու կեանքին—գոնէ ինչքան այդ վերաբերում է արևմտա-եւրոպական արդիւնաբերական երկրներէ սօցիալիստական շարժման տեսականի ու գործնականի զարգացման:

Եւ իսկապէս, մենք գիտենք, որ արևմտեան Եւրոպայում ազդարային ծրագրի, այսինքն գիւղական մասսային բանւորական շարժման հարցը ոչ մի տեղ չէ ծագել միաժամանակ քաղաքային բանւորական շարժման ծրագրի հարցի հետ: Յայտնի է, որ սկզբնական սօցիալիստական շարժումը մասսային ձևով ամենուրեք արևմտեան Եւրոպայում ծագել է ու զարգացել քաղաքային բանւորական բնակչութեան միջավայրում և հենց այդ միջավայրում էլ հասել է քիչ թէ շատ նշանաւոր չափերի, և միայն այն ժամանակ, երբ մասսային շարժման այդ սկզբնական աստիճանը արդէն սկսում է, այսպէս ասած, սպառել իր պատմական դերը և մօտենալ իր բնական սահմաններին—միայն այդ ժամանակ, քիչ թէ շատ հրամայօրէն սկսում է ծագել ազդարային ծրագրի հարցը՝ ինչպէս տեսականի նոյնպէս և գործնականի մէջ: Իզուր չէ, որ սօցիալիստական շարժումը իր զարգացման առաջին ֆազում նոյնացնում էին միայն քաղաքային արդիւնագործական պրօլետարիատի մասսային շարժման հետ, զուտ պրօլետարական շարժման հետ, այս խօսքի նեղ մտքով: Սօցիալիստական յեղափոխութիւնը նոյնացնում էին պրօլետարական յեղափոխութեան հետ, սօցիալիստական տեսակետը՝ պրօլետարական տեսակէտի հետ:

Այդպէս է, ասենք ամեն տեսարանի, ամեն ուսմունքի զարգացման բնական ընթացքը: Հէնց ինքը աւելաբերը այն հասկացողութեան գիտական սօցիալիզմի, որի, ինչպէս տեսանք, կարելի է պրօլետարական անունը տալ, միշտ պնդում էր, որ գիտական տեսութիւնը միշտ պիտի կեանքին հետևի և ոչ թէ՛ հակառակը: Իսկ դա նշանակում է, որ ոչ մի գիտական տէօրեայ, որը ընդգրկում է կեանքի մի յայտնի պրօցես, չի կարող երկարատե գոյութիւն պահպանել միևնոյն անփոփոխ ձևով, որովհետե հէնց այդ պրօցեսը, որ նա ընդգրկում է և ձևակերպում նրա զարգացման մի յայտնի աստիճանի վերայ, պէտք է յետոյ անցնի միւս աստիճանին, որը աւելի լայն շրջանակներ է պահանջում տեսականից ևս:

Այդպէս էր, օրինակ, սօցիալիստական շարժման այն նախ-

կին հասկացողութիւնը, որ գոյութիւն ունէր գիտական սօցիալիզմի պրօլետարական աստիճանից առաջ և որին յատկացրել են մասնաւորապէս «ուտօպիական» անունը: Տարօրինակ կլինէր կարծել—թէ և այդ կարծիքը խիստ տարածւած է միակ ու անփոփոխ գիտական դոգմայի հետևողների մէջ—որ այդ «ուտօպիական» սօցիալիզմի մէջ չկար ոչինչ խոր-կենսական և իրական, որ նա չէր համապատասխանում մի ամբողջ շարք խոշոր պատմական փաստերի և լիովին բաւարարութիւն չէր տալիս այդ ժամանակի սօցիալիստների տեսական պահանջներին: Այդպէս մտածել—կնշանակէ միևնոյն ժամանակ պնդել, որ ինքը, սօցիալիստական շարժումը արևմտեան Եւրոպայում իր ծագման սկզբից միշտ մնացել է միևնոյն անփոփոխ ձևով, այսինքն որ նա միանգամից է ստացել այնտեղ այն ձևը, որով յայտնւում է նա մեր առաջ միայն XIX դարի երկրորդ կիսից, այսինքն քաղաքային պրօլետարիատի կազմակերպւած ու առանձնացած մասսային շարժման ձևով:

Այն ինչ մենք գիտենք, որ իսկապէս սօցիալիստական շարժումը արևմտեան Եւրոպայում, իր զարգացման ամենաառաջին աստիճաններում, բոլորովին մի ուրիշ բան էր: Մի կողմից դա մի զուտ դաւադրական շարժում էր՝ ծագած մանր գաղտնի ընկերութիւնների ձևով, որ կազմւած էր առաւելապէս բուրժուական դասակարգի հերձաւածողներից և որոնք իրենց գործունէութեան մէջ ղեկավարւում էին գլխաւորապէս զաղափարական ու բարոյագիտական մղումներով: Իսկ միւս կողմից բանւորական դասակարգի խորքերից այդ զաղափարական շարժման հանդէպ էին գալիս այն ժամանակ կիսատարերային մասսային բանւորական յուզմունքներ ինչպէս օրինակ, 1819 թ. անգլիական ջուլհակների և ածխապեղների քաղցած խռովութիւնները, կամ 1835 թ. Լիօնի բանւորական ապստամբութիւնը:

Այդ սկզբնական ֆազին, որի մէջ էր արևմտեան Եւրոպայի սօցիալիստական շարժումը, որը դեռ շատ մութ կերպով էր գիտակցում այն կոնկրետ ձևերը, որ նրան վիճակւած էր ստանալ, միանգամայն համապատասխանում էր և այն ժամանակւայ սօցիալիստական ուսմունքը: Մա ամբողջովին կենտրոնացած էր գոյութիւն ունեցող բուրժուական կազմի քննադատութեան վրայ՝ հասարակական արդարութեան տեսակէտից, և առայժմ դեռ առա-

Ղիկայ տնտեսական յեղաշրջման ընդհանուր նպատակների և ոչ թէ սրա իրականացման միջոցների պարզաբանութեան վրայ: Սրա մէջ է մտնում բուրժուական կապիտալիստական արդարութեան պաշտպանների դէմ մղւած գաղափարական կռիւը, նոցա տեսական պատճառաբանութիւնների հերքումը, նոյնպէս և արտադրութեան ընկերակցական կազմակերպութեան ամբողջ առաւելութիւնների պարզաբանութիւնը համեմատած կապիտալիստականի հետ: Այդ ամբողջ կռիւը զուտ գաղափարական շրջանում իր ժամանակին կազմում էր սօցիալիստական շարժման ամենաէական խնդիրը: Այն գաղափարները, որ այն ժամանակ աշխարհ գցեցին սօցիալիզմի առաջին կարգապետները մի մի գիւտ էին և նշանաւոր չափով մինչև հիմա էլ կազմում են սօցիալիստական աշխարհայեացքի ամենաանհրաժեշտ տարրերը:

Յայտնի է որ Մարքսն ու Էնգելսը, որ բոլորովին տրամադիր չէին նոյնիսկ ամենաչնչին չափով չափազանցեցնել այսպէս կոչւած ուտօպիական սօցիալիզմի գրական նշանակութիւնը, չէին կարող այնուամենայնիւ ընդունել նորա շատ կարևոր ազդեցութիւնը՝ բանւորական շարժման զարգացման ընթացքի վրայ. «...Այս սօցիալական ու կոմունիստական գրւածքները», ասում են նոքա իրենց «կոմունիստական Մանիֆեստի» մէջ, «կազմւած էին նոյնպէս քննադատական տարրերից. նոքա յարձակւում էին գոյութիւն ունեցող հասարակութեան բոլոր հիմքերի վերայ. այդ պատճառով էլ նոյն մասակարարեցիկ բանւորութեան լուսաւորութեան համար վերին աստիճանի բանկազին նիւթ» (ընդգծ. Լ. Շ.) Մեր ընդգծած վերջին խօսքերը հաղիւ թէ կարիք ունենան պարզաբանութեան: Դժւար է երևակայել աւելի կարևոր ծառայութիւն՝ որ արւած լինի սօցիալիստական շարժման, քան այն, որի մասին խօսում են այստեղ «կոմունիստական Մանիֆեստի» հեղինակները: Այստեղ աւելորդ չէր լինի նկատել, որ այդ բնորոշումը սօցիալական ու կոմունիստական գրւածքների, որ մատակարարեցին «բանւորութեան լուսաւորութեան համար վերին աստիճանի թանկագին նիւթ», ոչ միայն ցոյց չի տալիս նոցա բացառապէս ուտօպիական բնաւորութիւնը, այլ ընդհակառակը, աւելի շուտ ենթադրել է տալիս նոցա մերձաւոր շփումը բանւոր դասակարգի կենսական շահերի հետ:

Սօցիալիզմի զարգացման այդ ամենանախնական շրջանի

ուտօպիական կողմը երևան է դալիս այն գործնական նախապայմանների մէջ, որոնցով այն ժամանակ կարծում էին տնտեսական յեղաշրջման իրականացման հասնել: «կոմունիստական Մանիֆեստի» կարծիքով, սօցիալիզմի այդ առաջին տէօթետիկները գլխաւոր սխալը կայանում էր այն բանում, որ նոքա բաւականաչափ պարզ չէին կարողանում հասկանալ դասակարգային անտագոնիզմի անհաշտութիւնը, այստեղից էլ ծագում էր նոցա բացասական վերաբերմունքը դէպի քաղաքական և առանձնապէս յեղափոխական կռիւը:

«Նոքա գիտակցում էին, ճիշտ է,—կարդում ենք «կոմունիստական Մանիֆեստում»—որ նոքա իրենց ծրագիրներով հանդիսանում են ներկայացուցիչ, գլխաւորապէս բանւորական դասակարգի շահերի, իբրև ամենից աւելի տառապող դասակարգի... Բայց դասակարգային կուր անդարգացած ձևը, ինչպէս և նրանց սեփական կեանքի գրութիւնը նրանց այնտեղն է հասցնում, որ նոքա իրենք իրենց համարում են այդ դասակարգային հակառակութիւնից բարձր կանգնած: Նոքա կամենում են լաւացնել հասարակութեան բոլոր անդամների գրութիւնը, մինչև անգամ ամենալաւ վիճակ ունեցողներինը: Նոքա, այդ պատճառով էլ, անխտիր կոչ են անում ամբողջ հասարակութեան և գլխաւորապէս իշխող դասակարգին: Բաւական է հասկանալ նոցա սխտեմը, որպէսզի ընդունել այդ սխտեմը, իբրև ամենալաւագոյն ծրագիր ամենալաւագոյն հասարակութեան: Այդ պատճառով էլ նոյն մի կողմ են գրում ամեն մի քաղաքական, լասկապիս յեղափոխական, գործունեութիւն, նոյն ցանկանում են հասնել իրենց նպատակին խաղաղ նախապահով եւ փորձում են նոր հասարակական աւետարանի նախապահով բանիլ օրինակի ուժով, մտնել բնականաբար շրջադուրս փորձեալ» (ընդգծ. Լ. Շ.):

Տեսական սօցիալիզմի այդ շրջանը այդ ձևով ներկայանում է, իհարկէ, վերին աստիճանի ուտօպիական, սակայն «քննաուտօպիական սօցիալիզմի» գործնական կողմի այդպիսի բնորոշումը հաղիւ թէ կարելի լինի միանգամայն ճիշտ համարել: Դա գուցէ կարելի է առանց այլևայլութեան վերագրել միայն Ֆուրիէի ուսմունքին, այն էլ միայն այն ձևով, ինչպէս որ այդ հասկանում էր ինքը Ֆուրիէն, որը խորը հաւատացած էր, թէ հասարակական վերակազմութեան նախաձեռնութիւնը՝ իր յայտա-

ըրարած հիմքերի համեմատ՝ կարող են վերցնել իրենց վերայ հէնց ունենոր դասակարգի ներկայացուցիչները: Սակայն այստեղ էլ անհրաժեշտ է նկատել, որ Ֆուրիէի այդ հաւատը տրամաբանօրէն կապւած չէր նրա ամբողջ ուսմունքի հետ, ամենևին չէր հետևում անհրաժեշտօրէն նրա քննադատութիւնից գոյութիւն ունեցող կազմի մասին, այդ պատճառով էլ պարտաւորիչ չէր նրա գործը շարունակողների համար, որոնց թուում մենք հանդիպում ենք ուսուցիչայից խզւած այնպիսի մարդկանց, ինչպէս Չերնիշևսկին:

Ինչ վերաբերում է ուսուցիչական սօցիալիզմի միև ներկայացուցիչներին, յայտնի է, որ, օրինակ, Բօքերտ Օուէնը շատ անգամ է դիմել անմիջապէս բանւորական մասսաներին և լուրջ փորձեր արել մասսային բանւորական շարժում առաջ բերելու: Այդպէս 1832 թ. նա հիմնեց Անգլիայում «բոլոր արհեստների մեծ աղգային միութիւնը», որ նպատակ էր դրել ճնշում գործղնել պարլամենտի վրայ և այդպիսով ձեռք բերել 8-ժամեայ բանւորական օրւայ օրէնք: Մենք գիտենք նոյնպէս, որ Օուէնի հետևողները շարունակեցին նոյնպիսի քաղաքականութեամբ առաջնորդւել և համաձայնութեան էին գալիս շարտիստների հետ:

Նոյն բանը պէտք է ասել և Ֆրանսիայի մասին, որտեղ քաղաքական կեանքի ընդհանուր բնաւորութիւնը աւելի յեղափոխական էր, քան Անգլիայում, և որտեղ այդ պատճառով «քննա-ուսուցիչական սօցիալիզմը» իր գործնական կիրառութեան դէպքում իսկոյն և եթ ընդունեց քաղաքական յեղափոխական ծրագրի ձև՝ Եակօբինական բնաւորութեամբ: Ֆրանսիայի սկզբնական սօցիալիստական շարժման խիստ-դասակարգային ու զուտ-յեղափոխական բնաւորութեան մասին կարելի է դատել հենց օրինակ, Բլանկիի ճառի հետևեալ կտորից, որ նա արտասանեց 1832 թւին դատարանում:

«Ինձ մեղադրում են նրանում, որ ես ասացի 30 միլիօն Ֆրանսիացիների, նոյնպիսի պրօլետարների, ինչպէս և ես, որ նոքա ապրելու իրաւունք ունեն: Սա պատերազմ է հարուստների ու աղքատների մէջ: Այս բանը ցանկանում են հարուստները, որովհետև նոքա—յարձակւող կողմն են... Թող գիտենան, որ ժողովուրդը այլևս ողորմութիւն չի խնդրիլ»:

Բլանկին պահանջում էր ընդհանուր ընտրողական իրաւունքը»

հարկեր հարուստների վերայ և աղգային բանկ: Կասկած չկայ, որ այդ պահանջները ամբողջապէս վերցրած ներկայացնում էին իրենցից, եթէ նոցա նայելու լինենք, որպէս սօցիալական հարցի լուծման»—միանգամայն ուսուցիչական ծրագիր, բայց այնուամենայնիւ դժւար է ասել, որ սօցիալիզմի այդպիսի հասկացողութիւնը հակայեղափոխական ու հակա-դասակարգային բնաւորութիւն ունենար: Այդ պատճառով էլ, մեզ թուում է, որ ամենից աւելի ճիշտ և ուղիղ պէտք է համարել «քննա-ուսուցիչական սօցիալիզմի» հետևեալ բնորոշումը, որ մենք գտնում ենք «Կօմունիստական Մանիֆեստի» նոյն գլխում:

«Այդ սիստեմների հնարողները, ճիշտ է, տեսնում են դասակարգերի հակազրութիւնը, տեսնում են կործանիչ տարրերի ազդեցութիւնը հենց իշխող հասարակութեան մէջ, բայց նոքա չեն նկատում պրօլետարիատի մեջ ոչ մի պատմական ինքնագործնուեութիւն, ոչ մի՝ առանձնապէս նրան յատկ, քաղաքական» (ընդգծումը Լ. Շ.):

Մենք կարծում ենք, որ մեր ընդգծած վերջին խօսքերի մէջ ամենից աւելի լաւ է նշմարած այսպէս կոչւած «ուսուցիչական սօցիալիզմի» ամբողջ շրջանի ամենազլխաւոր և ամենաբնորոշ գիծը: Դա կայանում է ոչ այնքան նրանում, որ առաջին սօցիալիստները բաւականաչափ չէին հասկանում դասակարգային տարրերութիւնները ու բացասում էին քաղաքական կռիւր, որքան նրանում, որ նոքա ամենևին չէին կարողանում հաւատալ, որ այդ կռուում հնարաւոր է յենել հենց իրենց, բանւորների յեղափոխական նախաձեռնութեան վերայ: Այստեղից է ծագում Օուէնի հիասթափութիւնը բանւորական միութիւններից, այստեղից է նաև Ֆրանսիական սօցիալիստների եակօբիականութիւնը: Ահա հենց այդ գծի վերայ է մատնացոյց արւում «Կօմունիստական Մանիֆեստի» մեր ընդգծած վերոյիշեալ խօսքերում:

Ամեն որ հեշտութեամբ կհամոձայնի, որ եթէ սօցիալիզմի առաջին գաղափարական կարապետները «չէին նկատում պրօլետարիատի մէջ ոչ մի պատմական ինքնագործնուեութիւն, ոչ մի առանձնապէս նրան յատուկ քաղաքական շարժում», դա ամենևին չէր առաջանում նրանց ղիտողութեան անբաւարարութիւնից կամ կեանքի իբական հասկացողութեան պակասութիւնից, այլ գլխաւորապէս այն հասարակ պատճառով, որ պրօլե-

ատարիատի պատմական ինքնագործունէութիւնը և ինքնուրոյն քաղաքական շարժումը դեռ չափազանց թոյլ կերպով էին նշմարուում իրականութեան մէջ, որովհետև պրօլետարիատը այն ժամանակ դեռ շատ քիչ էր նախապատրաստուած իր պատմական գերի համար, կամ ինչպէս «Կոմունիստական Մանիֆեստն» է ասում, «դեռ վերին աստիճանի անզարգացած էր, այնպէս որ ինքը իր դրութիւնը պատկերացնում էր Փանտաստիքաբար»:

Բայց եթէ այդպէս է, եթէ ինքը պրօլետարիատը այն ժամանակ դեռ խիստ անզարգացած էր և Փանտաստիքաբար էր պատկերացնում իր սեփական դրութիւնը, դա արդէն նշանակում է, որ սօցիալիստական շարժման զարգացման առաջին աստիճանների, այսպէս կոչւած, «ուտօպիզմը» կայանում էր ոչ այնքան նրա առաջին կարապետների սխալ դատողութիւնների ու տեսութիւնների մէջ, որքան իրականութեան մէջ, իրերի այն օրեկտիւ, փաստային դրութեան մէջ, որին այն ժամանակ քիչ թէ շատ համապատասխանում էին այդ տեսութիւնները: Այդ տեսակէտից առաջնորդելով կարելի է ասել, որ օրինակ մեր ժամանակակից արեւմտա-եւրոպական սօցիալիստական կուսակցութիւնների մասային բանւորական շարժման հարցի կերպարանաւորումը 30 — 40-ական թւականների Ֆրանսիայի համար շատ աւելի ուտօպիական կլինէր, քան այն եակօբինաբլանկիստական ծրագիրը, որի դրօշակի տակ այն ժամանակ Փարիզի բանւորները գնում էին տիրանալու ընդհանուր ընտրողական իրաւունքին:

Այդպիսով մենք գալիս ենք այն եզրակացութեան, որից սկսեցինք, երբ խօսք բացինք սոցիալիզմի մասին: Սօցիալիստական ուսմունքը ինչպէս և ամեն մի տեսութիւն, որ ընդգրկում է կեանքի մի յայտնի պրօցէս, մի յայտնի հասարակական շարժում, անհրաժեշտօրէն պէտք է անցնի զարգացման միմիանց հետևող ֆազերը՝ համապատասխան կեանքի զարգացման. և ամեն մի նախընթաց ֆազ, հետևելի վերաբերմամբ, վաղ թէ ուշ, ընդունում է ուտօպիական բնաւորութիւն, այսինքն դադարում է իրերի իսկական դրութեան համապատասխանելուց:

Այսպէս ասած, պատմական անհրաժեշտ ուտօպիզմից խուսափելու համար, մինչև անգամ բաւական չէ, որ այս ինչ սօցիա-

լիստական տեսութիւնը ճանաչի էւօլիւցիայի սկզբունքը և կառուցւած լինի հասարակական զարգացման մի յայտնի պրօցեսի վերայ. անհրաժեշտ է նաև, որ նա ուշադրութեան առնի հասարակական զարգացման փոփոխութեան հնարաւորութիւնը, հենց այդ պրօցեսի մէջ, այսինքն՝ նրա չափերի, արագութեան, յարաբերական նշանակութեան մէջ և այլն: Հասարակական զարգացման միևնոյն անփոփոխ պրօցեսի հասկացողութեան վերայ հիմնւած տեսութիւնը կարող է նոյնպէս ուտօպիական լինել, ինչպէս և զուտ գերզգայական սկզբունքի վերայ հիմնւած տեսութիւնը:

Այդպիսի ուտօպիական մնացորդներից, որը առաջ է եկել միևնոյն հասարակական պրօցեսի անորոշ երկար ժամանակի ընթացքում անփոփոխ դերի մասին կազմած սխալ հասկացողութիւնից, զուրկ չէ նաև ներկայումս սօցիալիստական շարժման այն գիտական մեկնաբանութիւնը, որ փոխարինեց ամենանախնական սօցիալիստական տեսութիւններին և որը յայտարարեց «Կոմունիստական Մանիֆեստի» մէջ դեռ անցեալ տարի 40-ական թւականներին:

Իսկապէս, սօցիալիստական շարժման այդ առաջին սիստեմատիկ հիմնաւորումը, որ առաջին անգամ գիտական սօցիալիզմի անունն ասացաւ, կրում էր իր վերայ համապատասխան պատմական էպօխայի ակնյայտնի հետքեր. նա ուրիշ ոչինչ էր, եթէ ոչ, անմիջական արտացոլումն սօցիալիստական տեսութեան մէջ XIX տարի առաջին կիսի երկու խոշոր հասարակական փաստերի՝ անսովոր արագ աճումն խոշոր կապիտալիստական արդիւնաբերութեան և նոյնքան արագ աճումն քաղաքային բանւոր բնակչութեան: Այս երկու երևոյթների վերայ—արտադրութեան կենտրոնացման ու պրօլետարիատի աճման—հիմնեց այն ժամանակ սօցիալիստական յեղաշրջման միանգամայն ամբողջացած տեսութիւնը:

«Այն բոլոր դասակարգերից որոնք այժմ էլ դէմ են կանգնած բուրժուազիային—կարողում ենք «Կոմունիստական Մանիֆեստում», միայն պրօլետարիատն է իսկական յեղափոխական դասակարգ: Միւս դասակարգերը դէպի անկումն են գնում և կորչում են խոշոր արդիւնաբերութեան զարգացման հետ միասին. իսկ պրօլետարիատը—նրա առանձնայատուկ արդիւնքն է:

«Միջին դասերը, մանր արդիւնաբերողը, մանր վաճառակա-

նը, արհեստաւորը, գիւղացին—սոքա բողոքը կուռւմ են բուր-
ժուազիւայի դէմ, որպէսզի ապահովեն իրենց գոյութիւնը կորուս-
տից իբրև միջին դասեր: Նոքա այդպիսով յեղափոխական շնն,
այլ պահպանողական: Աւելին ևս՝ նոքա յետադիմական են, նոքա
ցանկանում են պատմութեան անիւը յետ դարձնել: Եթէ նոքա
յեղափոխական են, միայն այն մտքով, որ պիտի դառնան պրո-
լետարներ. այդպիսով նոքա պաշտպանում են ոչ թէ իրենց ներ-
կայ շահերը, այլ ապագայ, նոքա թողնում են իրենց տեսակէտը,
որպէսզի կանգնեն պրօլետարիատի տեսակէտի վերայ»:

Այս մի քանի խօսքերում արտայայտել է Մարքսի ու Էնգ-
էլսի ամբողջ պատմական կօնցեպցիայի էութիւնը. նոցա մէջ
ամենաորոշ ձևով արտայայտել է «Կոմունիստական Մանիֆեստի»
ամենահիմնական, ամենակենտրոնական միտքը, որ ներ-
կայացնում է իրենից մի ամբողջ յեղափոխական ծրագիր, հիմն-
ւած, ինչպէս արդէն ասացինք, XVIII դարի յեղափոխական շարժ-
ման մի ամենախոշոր տնտեսական հետեանքի վերայ՝ խոշոր
կապիտալիստական արդիւնաբերութեան առաջ, կարծես առանց—
տարերային աճման, որը գուրս էր վանում—ինչպէս թւում էր—
մանր արտադրութիւնը ամեն տեղից:

Հեշտ է տեսնել, որ այդ յեղափոխական ծրագրի կամ աւելի
ճիշտ սօցիալիստական յեղաշրջման այդ տեսութեան արողակա-
նութիւնն ու միաձոյլութիւնը ամբողջապէս հիմնւած է այն են-
թադրութեան վերայ, որ արտադրութեան կենտրոնացումն ու
պրօլետարիատի աճումը ոչ միայն պէտք է առաջ ընթանար ու
զարգանար առհասարակ, այլ նաև, բացի դրանից, պէտք է հաս-
նէր առ սահմանեալ չափերի, այսինքն այնպիսի չափերի, երբ
արտադրութեան բոլոր միջին ձևերը և բնակչութեան բոլոր մի-
ջին շերտերը իսկապէս ոչ մի պատմական դեր գործնականում
չխաղային, և պրօլետարիատը կարողանար յաղթել, առանց կա-
րիք ունենալու միւս աշխատաւոր շերտերի հետ դասակարգային
միութիւն կապելու: «Կոմունիստական Մանիֆեստի» հիմնական,
կենտրոնական միտքը հենց դրանումն է կայանում, այսինքն
«պատմութեան անիւը յետ դարձնել» աշխատող՝ բոլոր միջին
տարրերի անխուսափելի ոչնչացման ու տնտեսական զարգաց-
ման պրօցեսի ստեղծած կազմակերպւած ու միացած պրօլետա-
րիատի անխուսափելիօրէն պատմական ազատ բեմը դուրս գալու

մէջ: Հենց այդ միտքն է տալիս ամբողջ շէնքին այն առանձին
պատմական—փիլիսոփայական գոյնը, որ այդ ժամանակից յայտ-
նի դարձաւ տնտեսական մատերիալիզմ անունով: «Միայն պրո-
լետարատն է—իսկական յեղափոխական դասակարգ՝ հակադիր
բուրժուազիային»,—այս խօսքերի մէջ դեռ չկայ ոչ մի որոշ
ծրագիր. սա—հասարակ գնահատումն է բանւորական բնակչու-
թեան զանազան շերտերի համեմատական յեղափոխականութեան
«Կոմունիստական Մանիֆեստի» իսկական ծրագիրը երևում է
միայն նրա այն դրութիւններից, որտեղ ցոյց է տրւում այդ իս-
կական յեղափոխական դասակարգի փաստական, քալլին գերակե-
ռութեան անխուսափելիութիւնը՝ խոշոր կապիտալիստական ան-
խուսափելի ու ամենայաղթ զարգացման շնորհիւ: Այստեղ է, որ
պարզւում է սօցիալիստական շարժման իսկապէս նոր ձևաւոր-
ումն, որ տալիս է նրան տարերային պատմական պրօցեսի
բնաւորութիւն: Բանի էութիւնը կայանում է այստեղ հենց խոշոր
կապիտալիստական արտադրութեան այդ անյաղթելի աճման մէջ,
որ ստեղծում է պրօլետարիատի—իբրև միակ ու իսկական յեղա-
փոխական դասակարգի արագ աճման, զարգացման ու վերջնա-
կան յաղթանակի համար ամուր նիւթական հիմք:

* * *

Բայց այս կենտրոնական միտքը, ամբողջ գիտնական շին-
ւածքի այդ գլխաւոր հիմքը ամենասերտ կերպով կապւած էր
գիւղացիութեան պատմական դերի վերաբերմամբ կազմւած յայտ-
նի հայացքի հետ, հետևաբար, նաև ազարարային սօցիալիստական
ծրագրի հարցի հետ: Բացասական վերաբերմունքը դէպի գիւղի
աշխատող մասնաները և սօցիալիստական շարժման մէջ ունեցած
նոցա դերի բացասական սահմանումը ուղղակի և անմիջապէս
բղխում է այստեղ մանր գիւղացիութիւնը պրօլետարիատին հա-
կադրելուց, մանր գիւղացիական տնտեսութիւնը կապիտալիստա-
կան արդիւնաբերութեանը հակադրելուց, իբրև մէկը միւսին
ժխտող պատմական հոսանքներ. մի կողմից՝ առաջադէմ և միւս
կողմից՝ յետադէմ: «Գիւղացին կուռւմ է բուրժուազիայի դէմ»,
որպէսզի ապահովի իր գոյութիւնը իբրև միջին դասակարգ. նա
աշխատում է «յետ դարձնել պատմութեան անիւը»: Հետևաբար,


ինչպէս տեսնում ենք, բանը այստեղ նրանուհին է, որ գիւղացիութիւնը, իսկապէս ղիմադրում է այն հիմնական պատմական պրօցեսին, որի վերայ կառուցւել էր սօցիալիզմի նոր տեսութեան ամբողջ շէնքը: Գիւղացիութիւնը պէտք է կորչէր բուրժուազիայի դէմ մղած կռոււմ մանր գիւղացիական տնտեսութիւնը պէտք է անհետանար խոշոր արդիւնաբերութեան դէմ մղած կռոււմ այնպէս, ինչպէս անհետացաւ մի քանի ճիւղերում արհեստային արտադրութիւնը. հակառակ դէպքում հասարակական ամբողջ նոր շինարարութեան հիմունքները կխախտէին և պատմութեան անիւը յետ դարձրած կլինէր:

Անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ պատմութեան անիւը յետ դարձնել ցանկացող միջին շերտերի բոլոր ներկայացուցիչներին, որոնց մասին յիշում է «Մանիֆեստի» մէջ (մանր արդիւնաբերող, մանր վաճառական, արհեստաւոր. գիւղացի) այդ դէպքում վճռողական դերը պատկանում էր հենց մանր գիւղացիութեանը՝ իր մանր գիւղացիական տնտեսութեամբ: Իսկ ինչ որ վերաբերում է մանր արդիւնաբերողներին, արհեստաւորներին, մանր առևտրականներին, դոցա վերաբերմամբ բուրժուազիայի պատմական դերը նշանաւոր չափով իրականացած էր և տնտեսական յեղաշրջումը արդէն համարեա կատարել էր. նրանց վերաբերմամբ նոր պատմական փիլիսոփայական տեսութիւնը բաւականանում էր միայն կատարած փաստը արձանագրելով. իսկ մանր գիւղացիութեան վերաբերմամբ այդ դեռ գիտական ենթադրութիւն: Եր (հիպօթէզ) միայն. և ահա հենց նրա այդ գլխաւոր մասում, մանր գիւղացիական տնտեսութեան անխուսափելի ոչնչացման վերաբերեալ գիտական այդ ենթադրութեան մէջ էր կայանում ամբողջ նոր տէօրիայի էութիւնը: Եւրոպայի ամբողջ մայր ցամաքի վերայ մանր գիւղացիութիւնը դեռ կազմում էր գիւղի գլխաւոր բանւորական մասսան. «Գերմանիայից մինչև Սեյլիա», Անգլիոյ գոյնից մինչև Ռուսաստան»: Նա հանդիսանում էր դեռ «արտադրութեան ու քաղաքական ուժի խիստ էական ֆակտոր»: Եթէ նա չանցնէր պրօլետարիատի շարքերը այդ տեսութիւնը, իր էական շատ մասերում, մեռած տառ կմնար: Ահա թէ ինչու համար մենք ասում ենք, որ մանր գիւղացիութեան տնտեսութեան անխուսափելի ոչնչացման գրութիւնը (թէզիսը) սօցիալիզմի մարքսիստական կօնցեպցիայի մի երկրորդական յաւելումն

չէր. ընդհակառակը նա ներկայացնում էր կօնկրետ ձևով նրա ամբողջ—այսպէս ասած տեսական բովանդակութիւնը: Բացի դրանից հեշտ է նկատել, որ այդ թէզիսը հակառակ կողմն է կլակէտային գրութեան, որը կապում է սօցիալիստական շարժման առաջխաղաց ընթացքը խոշոր կապիտալիստական արտադրութեան զարգացման հետ, որովհետև այդ զարգացումը չէր կարելի նոյն իսկ երկակայել, եթէ մանր գիւղացիութիւնը պահէր իր գերակշռող տեղը ընդհանուր ազգային արտադրութեան մէջ: Պրօլետարիատի աճումը և նրա քաղաքական դերը անխուսափելիօրէն սահմանուում ու սահմանափակուում էին աշխատաւոր գիւղացիական մասսաների քանակութեամբ:

Այստեղից անխուսափելիօրէն պէտք է ստացւէր այն խիստ տրամաբանական եզրակացութիւնը, որը ինչպէս արդէն գիտենք, խիստ կտրուկ ձևով արտայայտեց «Կոմունիստական Մանիֆեստի» մէջ. այն է, որ մանր գիւղացիութեան գոյութիւնն իսկ իրենց մանր գիւղացիական տնտեսութեամբ՝ դարձնում էր նրանց անշարժութեան ու բէակցիայի ներկայացուցիչներ՝ անկախ նոյն իսկ նոցա քաղաքական այս կամ այն յատկութիւնից. նոցա գոյութիւնն իսկ հանդիսանում էր արդէն պատմական շարժման ամբողջ հիմքի ուղղակի բացասումն. նա հանդիսանում էր արգելափ յայն իսկապէս—յեղափոխական հասարակական ոյժի աճման ու զարգացման, որը բեմ էր դուրս բերում պատմական պրօցէսի միջոցով: Ահա ինչու համար տնտեսական զարգացման պրօցեսի մէջ մանր գիւղացիական տնտեսութեան գալիք ոչնչացման թէզիսը մինչև անգամ չէր պահանջում այս տեսակէտից ոչ մի առանձին պայցոյց և պատճառաբանութիւն, որ յենէր տընտեսական անմիջական հետադասութեան, ժողոված փաստային նիւթի վերայ: Եւ մենք իսկապէս գիտենք, որ «Կոմունիստական Մանիֆեստի» եզրակացութիւնները գիւղացիական հարցի վերաբերմամբ զուտ a priori բնաւորութիւն են կրում: Դժւար թէ մէկը կարողանար պնդել, որ այստեղ ունենար նոյնիսկ որևէ նշանակութիւն գիւղացիական հարցի փաստային ուսումնասիրութիւնը, գիւղացիական կեանքի պայմանների փաստային ծանօթութիւնը, ծանօթութիւնը յատուկ պատմական պատճառների, որոնցից իսկապէս կախած էր այն Վամանակ գիւղական մասսաների այս կամ այն պայմանները: «Կոմունիստական Մա-

5713-69
ՀՄԿ



«նիֆեստի» ամբողջ փաստային, նկարագրական կողմը, նրա ամբողջ պատմական սուղերագրիծը նւիրւած է, ինչպէս յայտնի է, բացառապէս քաղաքային բուրժուազիայի ծագման ու աճման հարցին, նոյնպէս և այն տնտեսական յեղաշրջման նկարագրութեան, որ արդէն կատարւեց նորագոյն ժամանակներում քաղաքային արդիւնագործութեան շրջանում և այդ ամբողջ առաջնորդող գլուխը, որ տալիս է համաշխարհային պատմական պրօցեսի ամփոփ պատկերը, կրում է, իր բովանդակութեան միանգամայն համապատասխան, վերնագիր—«Բուրժուազիա և Պրօլետարիատ»: Գիւղի մասին միայն մի քանի խօսք է յիշուում և այն էլ միայն նրա համար, որ արձանագրի նրա՝ լիովին քաղաքին ենթարկւելը բուրժուազիայի տիրապետութեան ժամանած ֆազիսին: Եւ ահա այդ տիրապետութեան յետագայ տարածումն, համաշխարհային-պատմական պրօցեսի այդ շրջանի յետագայ դարգացումը, պէտք է բերէր, համաձայն «Կօմ. Մանիֆեստի» ընդհանուր կօնցեպցիայի, մանր գիւղացիական տնտեսութեան լիակատար ոչնչացման:

Ծագումը սա է այն թէզիսի, որ ընդմիշտ լուծում էր սօցիալիստական ագրարային ծրագրի հարցը: Այն զուտ a priori ճանապարհը, որով ստացւել է այդ թէզիսը, անհրաժեշտօրէն նրան պէտք է տար դօգմայական, բացարձակ բնաւորութիւն, պէտք է գերծ պահէր նորանոր որևէ կախումից շրջապատող կեանքի պայմաններից և մենք իսկապէս գիտենք, որ այդ թէզիսը անփոփոխ կերպով կրկնուում ու պաշտպանուում էր այն ժամանակից ի վեր բոլոր երկրների մարքսիստական գրականութեան մէջ՝ ամեն տեսակ հանգամանքներում:

«Կօմունիստ. Մանիֆեստի» դուրս գալուց շատ տարիներ անց, համարեա 50 տարի յետոյ, Էնգէլսը գրում էր իր «գիւղական հարցի մասին Ֆրանսիայում ու Գերմանիայում» յայտնի յօդւածի մէջ հետևեալը.

«Արտադրութեան կապիտալիստական ձևերի զարգացումը հիմքից կտրեց հողագործութեան մանր տնտեսութիւնների կենսական նեարդը. այդ տնտեսութիւնները դիմում են դէպի անկումն ու կորչում առանց փրկութեան յոյսի»: Եւ յետոյ հարկերը, անբերրիութիւնը, ժառանգական բաժանումները, դատաստանական պրօցեսները քշում-տանում են գիւղացիներին միմիանց

յետևից վաշխառուի մօտ. պարտքից ազատելը աւելի ու աւելի դառնում է անհնարին: Կարճ ասած, մանր գիւղացին ինչպէս արտադրութեան անհետացած եղանակի իւրաքանչիւր մնացորդ, անխուսափելիօրէն կորստեան է դատապարտւած: Դա—ապագայ պրօլետարն է 1):

Նոյն բանը անփոփոխ կերպով կրկնւել է և Ֆրանսիական սօցիալիստական գրականութեան մէջ: Թէև մարքսիստական ուղղութեան ֆրանսիական սօցիալիստները իրենց աչքերի առաջ տեսնում էին Ֆրանսիայի գիւղացիութեան խիստ կայունութեան անհերքելի փաստը և թէև նոքա հրաշալի կերպով հասկանում էին, որ իրենց յետագայ յեղափոխական կուռի մէջ նոքա անխուսափելիօրէն գործ պէտք է ունենան նոյն գիւղացիական մասսայի դիրքի հետ՝ վերջիններս Ֆրանսիայի քաղաքական կեանքի վերայ ունեցած ճնշող ազդեցութեան պատճառով,—և այդ իսկ պատճառով, ինչպէս յայտնի է փորձում էին ծրագրել իրենց առանձին սօցիալիստական ագրարային ծրագիրը, որտեղ աշխատում էին հաշտեցնել սօցիալիստական պահանջները մանր գիւղացիութեան հողային մասնաւոր սեփականութեան պահպանելու հետ, սակայն այնուամենայնիւ նոքա ագրարային ծրագրի այդ ընդհանուր նախագծի մէջ գրում էին, որ «իրերի այդ դրութիւնը, որ բնորոշում է գիւղացիական սեփականութեամբ, ճակատադրօրէն դատապարտւած է կորստեան 2):

Սակայն ուղղափառ մարքսիզմի անքակտելի կապը դէպի ագրարային հարցը ունեցած յարաբերութեան հետ, նրա այդ տրամաբանական անհրաժեշտութիւնը՝ պնդելու մանր գիւղացիական տնտեսութեան անխուսափելի ոչնչացման վրայ—ամենից ակնյայտնի կերպով նկատւեց մարքսիզմի ուսու հետևողների մէջ: «Կապիտալիստական-կլասսիկ» երկրներում ուղղափառ մարքսիզմի դիրքը այնուամենայնիւ համեմատաբար աւելի ամուր էր. այնտեղ քաղաքային պրօլետարիատի թիւը իսկապէս մեծ չափերի էր հասել և այնտեղ այդ պրօլետարիատը իսկապէս արդէն ցոյց էր տւել իրեն, իբրև քաղաքական խոշոր ոյժ և հէնց խոշոր

1) «Die Neue Zeit» 1894—95 թ. 293, 4, 5, երես.
 2) «Ses Programme Agricole du Parti ouvrier francais» 1894 թ. երես 1.

կապիտալիստական արդիւնարեւոյթեան զարգացումը այնտեղ աւելի ամուր պատմական ու տնտեսական հողի վերայ էր դրւած. այն ինչ, Ռուսաստանում, ուսական կապիտալիզմի զարգացման բնորոշ պատմական ու տնտեսական պատճառների շնորհիւ, սօցիալիստական կուսակցութիւնը իր առաջ բոլորովին այլ և խիստ իւր տեսակ իրերի դրութիւն ունի: Բայց այնուամենայնիւ ուսական մարքսիստների համար, քանի զեռ նորա մնում են և մնում էին ուղղափառ, չէ եղել և չկայ ուրիշ ելք և մենք գիտենք, թէ «Կոմունիստ. Մանիֆեստի» տարին այդպիսի կոյր հաւատարմութիւնը որպիսի ներքուլսեան սիւների հասցրեց նոցա: Յեղափոխական պրակտիկայի շրջանում, նորա ստիպւած էին իրենց սօցիալիստական ծրագիրը կապել գիւղի քուրճուակն հողային յարաբերութիւնների քարոզի հետ՝ գիւղում խոշոր կապիտալիստական տնտեսութիւններ հիմնելու նպատակով: Յեղափոխական տեսութեան շրջանում, նորա ստիպւած էին հերքել, որ աշխատող, շահագործող և սակաւահող գիւղացիութիւնը պատկանում է բանւոր դասակարգին,—հակառակ նոյնիսկ իրենց սեփական շօլայի լաւագոյն ժամանակակից տէօրետիկների կարծիքին:

Բայց կրկնում ենք. «Կոմունիստ. Մանիֆեստի» «գիտական» մարքսիզմը փակւած է միանգամայն որոշ տեսական շրջանակների մէջ: Հրաժարել մանր գիւղացիական տնտեսութեան ոչնչացման կամ գոնէ նրա յարաբերական չափերի արագ նւազման թեզիսից—կնշտնակէր ուսական ուղղափառների համար իրենց պրօլետարական սօցիալիստական յեղաշրջման տեսութեան ներդաշնակութիւնը խանգարել. դա կնշտնակէր ընդունել, որ անհրաժեշտ է այդ յեղաշրջման մէջ մանր աշխատող գիւղացիութեան, իբրև գիւղացիութեան մասնակցութիւնը, առանց կանխապէս պրօլետարիատի, բառիս բուն նշանակութեամբ, շարքերն անցնելը. դա կնշտնակէր, վերջապէս, հրաժարել «Կոմունիստ. Մանիֆեստի» այն հիմնական մտքից, որը կայանում է օրիէկտիւ տնտեսական պրոցեսի գերագոյն լաւատես գնահատութեան մէջ, որ անկախ է թէ մարդկային կամքից, թէ մարդկային սուրբեկտիւ ձգտումներից, բայց որը այնուամենայնիւ նախապատրաստում է գալիք սօցիալիստական յեղաշրջման ինչպէս հոգեկան, նոյնպէս և ամբողջ տեխնիքական ու նիւթական կողմը:

* * *

Այսպէս ուրեմն, մենք տեսնում ենք այժմ, թէ ինչպիսի վճռական նշանակութիւն ունի «դուռ» պրօլետարական սօցիալիզմի ամբողջ տեսութեան համար մանր գիւղացիական տնտեսութիւնների ոչնչացման կամ կայունութեան հարցը տնտեսական զարգացման ընդհանուր ընթացքի մէջ: Կարելի է համարձակ ասել, որ այդ հարցի հետ սերտ կապւած էր այդ տեսութեան հէնց գոյութիւնը, կամ, աւելի ճիշտն ասած, այն սահմանները՝ պատմական այն շրջանակները, որոնց մէջ նա կարող էր ճանաչել իսկապէս գիտական: Յայտարարւած լինելով կապիտալիզմի քաղաքային ինդուստրիայի շրջանում կատարած առաջին հսկայ գրաւումների շրջանում, երբ, բացի դրանից, ամբողջ հասարակական ուշադրութիւնը համարեա բացառապէս կենտրոնացած էր քաղաքային յեղափոխական ու բանւորական շարժման դէպքերի վերայ, այդ տեսութիւնը, որ ընդգրկում է քաղաքային կեանքի երեւոյթների ընդարձակ շրջան, միանգամայն համապատասխանում էր սօցիալիզմի զարգացման մօտագոյն աստիճանին: Բայց նրա ապագայ բախտը կախած էր այն բանից, թէ ինչ չափով իրականութիւնը կարողարացէր գիւղացիական կեանքի շրջանին վերաբերեալ նրա գուշակութիւնները: Եւ ահա, երբ հետզհետէ սկսեցին աւելի ու աւելի պարզել կապիտալիստական զարգացման պայմաններն ու հետեանքները գիւղատնտեսական արտադրութեան շրջանում, և երբ հետզհետէ սկսեցին կուտակել սրան վերաբերեալ փաստացի տեղեկութիւնները, աւելի ու աւելի երևան եկաւ նոյնպէս և այն բանը, որ բոլոր այդ փաստացի տեղեկութիւնները շատ վատ են տեղաւորում մարքսիստական սօցիալիզմի խիստ պարփակւած տեսութեան շրջանակներում: Իսկապէս հէնց այստեղից էլ ծագեց գիւղացիական և սօցիալիստական ազրարային ծրագրի հարցը՝ իբրև տեսական առանձին հարց, որ կապւած է սօցիալիստական շարժման զարգացման նոր ֆազիսի մէջ մտնելու հետ: Հէնց այդ հարցի ընդհանուր տեսական պարզաբանութեան էր նւիրւած մեր յօդւածի գլխաւոր մասը: Այժմ մեզ մնում է աւելի մանրամասն կանգ առնել դուռ փաստային բնւորութիւն ունեցող այն մտքերի ու եզրակացութիւնների վերայ, որոնք կարող են բերել իբրև հաստատութիւն՝ գիւղա-

ցիական հարցին վերաբերեալ մինչև հիմա տիրող սկզբունքների աւելի կամ պակաս լիովին վերաքննութեան անհրաժեշտութեան համար և որոնք, ինչպէս մեզ թւում է, պէտք է ստիպէին բոլոր ոչ նախապաշարած մարդկանց ընդմիշտ հրաժարել ուղղափառ արհեստական տեսակէտից այդ հարցի վերաբերմամբ: Առաւել ևս, որ մենք, ինչպէս կտեսնէ ընթերցողը, պէտք է դիմենք այստեղ համարեա թացառապէս հէնց մարքսիստական շղօլայի ամենից աւելի հեղինակաւոր տէօրետիկների կարծիքներին ու եզրակացութիւններին:

Ամենից առաջ մենք պէտք է յիշեցնենք, որ ինքը Մարքսը, իւր վերջին գրածքներում, այնպէս կտրուկ-բացասական վերաբերմունք չունէր դէպի գիւղացիութիւնը, իբրև հասարակական տարրի, ինչպէս «Կոմունիստ. Մանիֆեստի» մէջ: Այսպէս, իւր Փարիզի կոմմունայի առիթով գրած բրոշյւրի մէջ (Քաղաքացիական կռիւր Փրանսիայում) նա ընդունում է, որ Ֆրանսիական գիւղացիները, եթէ նոքա Փարիզից կտրւած չլինէին վերսպւեան գորաբանակով, կարող էին միանալ Փարիզի բանւորների հետ և առաջ բերել ընդհանուր գիւղացիական ապստամբութիւն. նա ասում է նոյնպէս, որ կոմմունայի դէպքերը «ապահովեցին գիւղացիների համար, ի դէմս քաղաքային բանւորների, նրանց շահերի բնական ներկայացուցիչներին» և որ «կոմմունան լիովին իրաւունք ունէր բացահանչելու գիւղացիներին: Չեր փրկւթիւնը մեր յաղթանակի մէջ է». եթէ միևնոյն ժամանակ մենք յիշենք, որ Փարիզեան կոմմունան զուտ քաղաքային յեղափոխական շարժում էր՝ սօցիալիստական բաւականին որոշ գոյնով, այդ դէպքում մենք պէտք է ընդունենք, որ Մարքսի այդպիսի կտրուկ շեշտը Ֆրանսիական գիւղացիութեան և Փարիզի կոմմունայի բանւորութեան շահերի ընդհանրութեան վերայ—շատ թոյլ կերպով է հաշուում «Կոմունիստ. Մանիֆեստի» գիւղացիական հարցի վերաբերեալ հայեցակէտի հետ:

Աւելի հետաքրքրական է այդ հարցի վերաբերեալ Էնգէլսի մի քանի յայտարարութիւնը իր «գիւղացիական հարցի մասին Փրանսիայում և Գերմանիայում» յօդւածի մէջ: Այդ յօդւածը, ինչպէս յայտնի է, գրւած է 1894 թ. այսինքն այն ժամանակ, երբ Փրանսիայում արդէն վերջնականապէս հաստատւել էր բուրժուազիայի քաղաքական ու տնտեսական տիրապետութիւնը: Այն

ժամանակ արքայական կուսակցութիւնները արդէն վերջնականապէս ջարդւել, յաղթւել էին և ամբողջ քաղաքական իշխանութիւնը այնտեղ անցել էր կապիտալի ներկայացուցիչների ձեռքը: Սա հէնց այն բուրժուական հանրապետութիւնն էր, որի մասին խօսում էր Կառուցիկին իր վերջին յօդւածներից մէկի մէջ «Neue Zeit»-ում¹⁾, ինչպէս այնպիսի մի պետական ձևի, որտեղ «պրօլետարիատն ու բուրժուազիան կանգնած են միմիանց դէմ յանդիման և որտեղ պրօլետարիատը կարիք չունի միապետական կառավարութեան պարիսպը անցնել՝ բուրժուազիայի վիզը կոտրելու համար»: Եւ ահա քննելով այսպիսի պայմաններում Ֆրանսիական սօցիալիստական կուսակցութեան դրութիւնը, նրա կազմած ու մեր յիշած ագրարային ծրագրի նախագիծը, Էնգէլսը, ի միջի այլոց հետեւեալ կարծիքն է յայտնում.

«Մի բանում մեր Ֆրանսիական ընկերները անպայման իրաւացի են. մաւր գիւղացիութեան կամփի հակառակ Ֆրանսիայում հնարւաւոր չէ ոչ մի ամուր քաղաքական յեղաշրջում (ընդգծ. Լ. Շ.): Յետոյ նա բացատրում է, թէ իր կարծիքով, ինչ ճանապարհով պէտք է Ֆրանսիական սօցիալիստները մօտենան մանր գիւղացիութեան, նոցա իրենց կողմը քաշելու համար:

«Գլխաւոր բանը այստեղ նրանումն է—գրում է նա—որ բացատրելի գիւղացուն, թէ նոցա տունն ու հողային սեփականութիւնը փրկել կամ պահել մենք կարող ենք միայն՝ այն ժամանակ, երբ կղարձենք այդ ընկերական սեփականութիւն ու ընկերական արտադրութիւն: Հէնց առանձին—անհատական տնտեսութիւնն է, պայմանաւորւած առանձին անհատական սեփականութեամբ, որ տանում է գիւղացուն դէպի կորուստ: Եթէ նա պնդի իր առանձին-անհատական տնտեսութեան վերայ, անխուսափիլիօրէն կկորցնէ և՛ հողը և՛ տունը, որովհետև կապիտալիստական խոշոր արտադրութիւնը դուրս կշարտէ նրա արտադրութեան հնացած եզանակը: Այդպիւէի դրութեան մէջ է այժմ բանը: Եւ տհա մէջ տեղ ենք գալիս մենք և հնարաւորութիւն ենք տալիս գիւղացիներին ձեռնարկել իրենց սեփական խոշոր արտադրութեան, ոչ թէ կապիտալիստական, այլ իրենց հաշուով: Միթէ չէ՞ կարելի հասկացնել գիւղացիներին, որ այս է պահան-

1) Օդոստոս 1994. № 48. 676 երես.

Ղոււմ նրանց շահը, որ այդ նոցա փրկութեան միակ միջոցն է»:

Այս շատ կողմերից հետաքրքիր հատւածի մէջ, ամենից աւելի արժանի է մեր ուշադրութեան, մեզ հետաքրքրող հարցի վերաբերմամբ, Էնգէլսի կատեգորիկ յայտարարութիւնը, որ անհնարին է որևէ ամուր քաղաքական յեղաշրջում Ֆրանսիայում, առանց մանր գիւղացիութեան համաձայնութեան և ինչպէս արդէն տեսանք, Էնգէլսը այստեղ կարող էր խօսել միայն քաղաքական յեղաշրջման մասին պրօլետարիատի ու բուրժուազիայի մէջ մղող կուրի շրջանում, այսինքն, այն քաղաքական յեղաշրջման մասին, որ ուղղւած էր վերջինի դասակարգային դերիշխանութեան դէմ: Բայց այդ դէպքում պարզ է, որ արձանագրելով այն փաստը, որ Ֆրանսիայում անհնարին է քաղաքական յեղաշրջում առանց մանր գիւղացիութեան համաձայնութեան և այստեղից հետևող՝ Ֆրանսիական պրօլետարիատի համար անհրաժեշտութիւնը իր՝ բուրժուազիայի հետ ունեցած կուռում, ունենալ մանր գիւղացիութիւնը իր քաղաքական դաշնակից, Էնգէլսը դրանով հէնց արմատօրէն յետ է կանգնում «Կոմմունիստ. Մանիֆեստի» տեսակէտից: Հեշտ է, ի հարկէ, տեսնել, որ այդպիսի դաշնակցութեան միտքն իսկ, հարցի այդ եղանակով դնելու հնարաւորութիւնն իսկ, Էնգէլսի կողմից հանդիսանում է ոչ այլինչ, եթէ ոչ բացասումն բացառապէս—պրօլետարական սօցիալիստական յեղաշրջման տեսութեան: Որովհետև այդ հարցը դնելով, Էնգէլսը այլ ևս չէ կարող յենել մանր գիւղացիութեան կանխօրէն ոչնչացման անհրաժեշտութեան թեզիսի վերայ. ընդհակառակը, այդ հարցը դնելով, դրանով նա արդէն արձանագրում է ոչ թէ ոչնչացումն, այլ վերջինիս ներկայութիւնը, իբրև կայուն հասարակական տարրի և վճռողական քաղաքական ուժի,—և այն էլ այնպիսի մի մօմենտում, երբ կոիւ է մղում պրօլետարիատի ու բուրժուազիայի մէջ և երբ սօցիալիստական շարժումը մօտենում է իր զարգացման վերջին շրջանին, այսինքն կատարեալ յեղաշրջման: Բայց ինչ պէտք է ասել այդ դէպքում զուտ ու նեղ պրօլետարական շարժման ու յեղաշրջման ամբողջ այն տեսութեան մասին, որի համար մանր գիւղացիութեան ոչնչացումն իր մանր գիւղացիական տնտեսութեամբ, անկիւնաքար էր հանդիսանում: Այժմ մենք տեսնում ենք, որ ինքը Էնգէլսը այժմ նկարում է մեր առաջ բոլորովին այլ հեռանկար ինչպէ՛ս սօցիալիս-

տական յեղաշրջման, այնպէս էլ մանր գիւղացիական տնտեսութիւնների ոչնչացման: Այժմ մենք արդէն տեսնում ենք, որ գոնէ Ֆրանսիական պրօլետարիատի վերաբերմամբ, ոչ մի քաղաքական յաղթանակ, հետևաբար և սօցիալիստական յեղաշրջման ոչ մի մերձեցումն հնարաւոր չէ առանց գիւղացիների դաշնակցութեան, նոյնպէս և մանր գիւղացիական տնտեսութիւնների ոչնչացումն պէտք է կատարել արդէն ոչ թէ կապիտալիստական արդիւնաբերութեան տարերային աճման ճանապարհով, այլ սօցիալիստակ սն պրօպագանդի, գիւղացուն իւր իսկական շահերը «պարզաբանելու» ճանապարհով և մանաւանդ որ; Էնգէլսի կարծիքով, մանր գիւղացիական տնտեսութեան պայմանների մէջ չէ երևում ոչ մի այնպիսի բան, որ լուրջ կերպով խանգարէր այդ պարզաբանելուն. «Միթէ գիւղացիներին չէ կարելի հասկացնել այդ», հարցնում է Էնգէլսը:

Իժևար չէ տեսնել, ինչ աստիճան այս բոլորը հետև ևն գիւղացիական հարցի վերաբերեալ ընդհանրացած ուղղափառ հայեացքներից, որ սովորաբար դուրս է բերւում «Կոմմունիստ. Մանիֆեստից», նրա հաւատից դէպի խոճար կապիտալիստական արդիւնաբերութեան անխուսափելի յաղթանակը, նրա կտրուկ ու խիստ «գիւղացիական կեանքի իղեօտիզմի» կարծիքից: Բայց ինչ էր պատահել: Չպէտք է անհրաժեշտօրէն հետևենք, որ գիւղացիութեան քաղաքական դերի ու նրա տնտեսական զարգացման մասին եղած հայեացքների այդպիսի խոշոր փոփոխութիւն կատարւելու համար, շատ բան պէտք է փոխէր նոյնպէս և հէնց գիւղացիական հարցի օրեկոիւ պայմանների մէջ, նոյնպէս և տնտեսական զարգացման ընդհանուր ընթացքի այն օրյակտիւ փաստերի մէջ, որ բարեկեցին իր ժամանակին Մարքսին ու Էնգէլսին իրենց սկզբնական տեսական ուրազիծը կազմել:

Ներկայումս արդէն ոչ մի կասկած չի կարող լինել, որ օրյակտիւ հիմքերի այդպիսի փոփոխութիւնը, որոնցով պայմանաւորւած էր գիւղացիական հարցի սկզբնական լուծումը, կատարեց իսկապէս վաղուց ի վեր, երբ առաջին անգամ դրա լուծման փորձը կատարւեց: Այստեղ գլխաւոր նշանակութիւն պէտք է ունենար, ի հարկէ, մանր գիւղացիական տնտեսութիւնների այն կայունութիւնը, որ երևան եկաւ վերջին տասնամեակում տնտեսական զարգացման ընթացքում նոյնիսկ Եւրոպայի ամենից

աւելի արդիւնաբերական երկրներում: Ապա, ինչպէս մենք կտեսնենք, փոփոխութեան ենթարկեց և շատ կարևոր փոփոխութեան նոյնպէս և մանր գիւղացիական տնտեսութիւնների բնաւորութիւնը—արևմտաեւրոպական այն երկրներում, ուր նա անցել է իր գոյութեան աւելի կամ պակաս պարզ կերպով արտայայտած մանր-բուրժուական շրջանը: Այս վերջին հանգամանքը նշանաւոր չափով բացատրում է նոյնպէս այն տեսական սխալը, որ արեւցայդ առիթով «Կոմունիստական Մանիֆեստում»: Սակայն գլխաւոր և սկզբնական փաստը, որ իրերի նոր դրութիւն ստեղծեց գիւղացիական հարցի շրջանում, այն ֆաստը, որը ուղղակի հսկասութիւն ստեղծեց «գուտ-պրօլետարական» մարքսիզմի ուղղափառութեան մէջ մի կողմից և գործնականի ու կեանքի մէջ միւս կողմից, դա, ինչպէս ասացինք, մանր գիւղացիական տնտեսութիւնների խիստ կայունութիւնն էր կապիտալիստական կազմի օրօք՝ արտայայտած XIX դարի երկրորդ կէտում:

Այս տնտեսական փաստի աւելի մօտիկ պարզաբանութեան համար մենք կարող ենք մատնացոյց անել հէնց մարքսիստական շխոլայի հեղինակներից մէկի և այն էլ ժամանակակից ամենից աւելի ականաւոր տնտեսակէտ-թէօրէտիկ կարծիքներն ու եզրակացութիւններն, այն է—Կաուցկու: Ահա թէ ինչ է գրում նա այս հարցի առիթիւ իր յօդւածում 1903 թւին: «Socialismus und Landwirtschaft» (Սօցիալիզմ և գիւղատնտեսութիւն):

«Մի կարևոր կէտում մենք պէտք է փոխենք մեր հայեացքները: Գիւղացին այնպէս արագ չի անհետանում, ինչպէս մենք այդ սպասում էինք: Վերջին տասնամեակում նա շատ դանդաղ է կորցնում իր դիրքերը, եթէ միայն կորցնում է: Դժուար է սակայն նախատեսել զարգացման ապագայ ընթացքը... Բայց, յամենայն դէպս, մեր պատմական հայեացքը մանր գիւղացիական տնտեսութիւնների արագ անկումը, ինչպէս և մենք չունենք ոչ մի հիմք հակառակը ենթադրելու և յոյս զնելու մանր տնտեսութիւնների մեծ առաջադիմութեան և որ նրանք դուրս կը վանեն խոշոր գիւղական արտադրութեանը»: (Die Heue Zeit 1903 թ. № 22):

Ընթերցողը տեսնում է, որ Կաուտսկու այս յայտարարութիւնը հազիւ թէ կարիք ունենայ աւելի մեծ զարգութեան և որոշ արտայայտութեան: Բայց աւելի ևս կարևոր է այն բացա-

տրութիւնը, որ Կաուտսկին տալիս է տնտեսական այդ փաստին իր «Ագրարային հարցի» մէջ և որը նա կրկնում է նաև վերոյիշեալ յօդւածում. նրա կարծիքով մանր գիւղացիական տնտեսութիւնների կայունութիւնը, «աւելի շուտ հետեանք է այն բանի, որ նա դադարում է խոշոր տնտեսութիւնների մրցակից լինելուց, կորցնում է այն մթերքների վաճառողի նշանակութիւնը, որ արտադրում է նրա կողքին խոշոր տնտեսութիւնը... և վաճառողի դերի փոխարէն ընդունում է գնողի դեր»: Ապա նա աւելացնում է հետևեալը.

«Իսկ այն ապրանքը, որից աւելորդ արտադրում է մանր գիւղացիական տնտեսութիւնը, արտադրութեան հէնց այն միջոցն է, որին ամենից աւելի կարիք ունի խոշոր գիւղացիական տնտեսութիւնը—այսինքն՝ բանւորական ոյծ:

Մրա մէջ է կայանում մանր գիւղացիական տնտեսութիւնների կայունութեան այն տեսական մեկնութիւնը, որ նրան տալիս է ոչ թէ պատահական, այլ անհրաժեշտ երևոյթի բնաւորութիւն՝ որ անմիջապէս կատարւած է հէնց կապիտալիստական արտադրութեան պայմանների հետ: Քանի դեռ մանր գիւղացիական տնտեսութիւնը մրցում էր իր մթերքները ծախելու խոշորների հետ—այն երկրներում, որտեղ նա սկզբում գտնուում է արգիւնարեբական ձեռնարկութեան մանր-բուրժուական շրջանում, նա անխուսափելիօրէն ենթակայ էր կապիտալիստական մրցման ընդհանուր օրէնքին, և այդ մտքով, անխուսափելիօրէն պէտք է կորչէր՝ միանգամայն համաձայն «Կոմունիստական Մանիֆեստի» տեսութեան միայն սկզբնական տեսութեան և իրերի իսկական ընթացքի տարբերութիւնը այստեղ կայանում է նրա մէջ, որ մանր գիւղացիական տնտեսութիւնների կորուստը այն ձևով չկատարւեց, ինչպէս որ ենթադրւում էր՝ քաղաքային ինդուստրիայի շրջանում մանր ձեռնարկութիւնների հետ արած հասարակ անալօգիայի (նմանութեան) հիման վերայ: Նա կատարւեց ոչ թէ մանր գիւղացիութեան ոչնչացման ու պրօլետարիատ դառնալու ճանապարհով, այլ իրենց մանր գիւղացիական տնտեսութիւնների վերափոխման և մանր-բուրժուականից—այնտեղ, որտեղ նա այսպիսի բնաւորութիւն էր կրում—փոխելու, այսպէս ասած՝ պրօլետարացած գիւղացիական տնտեսութեան, այնպիսի մի ձևի, որը շուկայ է հանում ոչ թէ գիւղական արտադրութեան

մթերքները աւելցուելը, այլ իր սեփական բանւորական ոյժը և այդպիսով հէնց սրանով հեռացուած են այն զուտ տնտեսական պատճառները, որոնք կարող էին ստիպել մանր գիւղացիութեան ոչնչանալ կապիտալիստական մրցման ճնշման տակ:

«Այստեղ, որտեղ իրերը այդ դրութեան հասան—ասում է Կառուցիկին—մանր և խոշոր գիւղական տնտեսութիւնները միմիանց չեն ժխտում, այլ պայմանաւորում են մէկը միւսին, նոյնպէս, ինչպէս կապիտալիստն ու պրօլետարիատը, այնտեղ գիւղական մանր տնտեսները աւելի ու աւելի պրօլետարիատի բնոյթ է ստանում: (Ընդթ. Լ. Ծ.):

Միանգամայն նոյն միտքն է արտայայտում Կառուսիկին «էքֆուրգի ծրագրի» 5-րորդ հրատարակութեան իւր առաջաբանում. —

«Այսպէս, մենք տեսնում ենք— ասում է նա—որ հէնց կապիտալի կենտրոնացումն ծնում է կարիք մանր տնտեսութիւնների աճման և նպաստում է նոցա ծագելուն» Եւ յետոյ... «նորագոյն մանր տնտեսութիւնները իրենցից ներկայացնում են զուտ պրօլետարական տիպի երևոյթներ. նրա անդամները սկսում են աւելի ու աւելի քիչ շահագրգռել արտադրութեան միջոցների մասնաւոր սեփականութեան մէջ, աւելի ու աւելի գալիս են նոյն դասակարգային անտագօնիզմին, ինչ որ վարձկան պրօլետարիատը... Որովհետև նորագոյն մանր տնտեսութիւնների անդամները աւելի կղզիացած, ճնշւած ու յոգնած են, քան խոշոր տնտեսութիւնների բանւորները, որովհետև նոցա տնտեսական դրութիւնը պակաս ակնյայտնի ու պարզ է, քան իսկական վարձու բանւորներինը, այդ պատճառով էլ նոցա շատ աւելի դժուար է կազմակերպել և բերել դասակարգային ինքնագիտակցութեան: Նրանք որոշ ղէպքերում կարող են հանդիսանալ Streikbrecher-ներ (գործադուր բեկանող Ծ. Թ.) և պահպանողական ընտրողներ, կարող են դանդաղեցնել պրօլետարիատի ազատագրական կռիւը, բայց նոքա արգէն ոչ մի տեղ չեն ներկայանում այնպիսի մի տարր, որի վերայ կապիտալը կարողանար հաստատուն կերպով հիմնել իր իշխանութիւնը: Վաղ թէ ուշ նոցա դասակարգային շահերը կստիպեն նոցա անցնել մարտնչող բանւոր դասակարգի կողմը»...

«Ոչինչ չի կարող աւելի սխալ լինել այն կարծիքից—ասում

է Կառուսիկին նոյն առաջաբանում—որ սօցիալիստական արտադրութիւնը միայն այն ժամանակ հնարաւոր կլինի, երբ բոլոր մանր տնտեսութիւնները կկլանեն խոշորներից: Այդ ղէպքում նա երբէք հնարաւոր չէր լինի, որովհետև կապիտալի կենտրոնացումը լիովին չի ոչնչացնում մանր տնտեսութիւնները, այլ աւելի օւս հնկերի տեղ նորն է ստեղծում: (Ընդթ. Լ. Ծ.):

* * *

Իժուար չէ տեսնել, որ Կառուսիկին այստեղ տալիս է հին «զուտ-պրօլետարական տերմինալօգեայի սոցրաձական մեկնաբանութիւնը, փրկում է հին խօսքերը, որ նոցա մէջ իրականութեան համապատասխան նոր բովանդակութիւն չցնի: Բայց հէնց նրա ուսուցիչներն էլ, այն ղէպքում, երբ գործ էին ունենում հասարակական կեանքի կոնկրետ երևոյթների հետ, ինչպէս որ փարիզեան կօմունայի կամ ազրարային ծրագրի Ֆրանսիական նախագծի վերաբերեալ յօդւածներում, գալիս էին իրենց հիմնական տեսակէտը բացատրող եզրակացութեան: Բանը նրանումն էր, որ այն նիւթական, տնտեսական բազան, որի վերայ կառուցել էր պրօլետարական գիտական սօցիալիզմի տեսութիւնը, աւելի ու աւելի խախուտ էր դառնում հէնց տնտեսական զարգացման ընթացքով: Մենք ունենք այստեղ այն ղէպքը, երբ էօլիցիական մի տեսութիւն որ հիմնւած է մի յայտնի տնտեսական պրօցեսի վերայ, դադարում է իրականութեան համապատասխանել, որովհետև այն նոյն պրօցեսը, որի վերայ հիմնւած էր այդ տեսութիւնը, գործող հանդիսացաւ միայն որոշ շրջանում ու սահմաններում: «Կօմունիստական Մանիֆեստի» ամբողջացած ու ներդաշնակ հիւպօթէզը, որի համաձայն ինքը կապիտալիզմը «կուում է այն ղէնքը, որ նրան մահ է բերում և ծնում է մարդիկ, որ պիտի ուղղեն այդ ղէնքը—պրօլետարներ, կիրառեց կապիտալիստական զարգացման միայն որոշ կազմերի վերաբերմամբ—միայն աւելի կամ պակաս չափով զանազան ժամանակներում և զանազան երկրներում:

«Կօմունիստական Մանիֆեստի» տեսակէտի այդ պայմանական գիտականութիւնն և պայմանական կիրառականութիւնն էր ահա, որ սկսեց հետզհետէ պարզել սօցիալիստական շարժման զարգացման ընթացքում և ամենից աւելի սուր ու բեկեֆ

կերպով հէնց գիւղացիական հարցի ու տգրարային ծրագրի վերաբերմամբ:

Երբեմն Կառուտակին գրում էր. «Մանր գիւղացիական տընտեսութիւնը անտեսապէս վերապրած են... Մանր արտադրութեան անխուսափելի կորուստը—սա է այն միտքը, որ կարմիր գծով անցնում է իմ աշխատանքի միջով (էրֆ. ծրագ.): Այժմ Կառուտակին նոյն «էրֆուրդի ծրագրի» առաջաբանում գրում է. «Այդպէս ուրեմն, մենք տեսնում ենք, որ հէնց կապիտալի կենտրոնացումը կարիք է ծնում մանր տնտեսութիւնների աճման»: Բաւական է համեմատութեան դնել միևնոյն հեղինակի այս երկու պնդումները, որպէսզի տեսնենք այն տեսական անդունդը, որը բաժանում է հասարակական ու տնտեսական զարգացման ընթացքի վերաբերեալ «գիտական սօցիալիզմի» նախկին հայեացքները այժմեայ հայեացքներից (հետևաբար և այդ հայեացքների միայն խիստ յարաբերական գիտական նշանակութիւնը): Նախկին հայեացքների համաձայն գիւղում սօցիալիստական պրօպագանդը մինչև իսկ կլինէր միանգամայն անհեթեթ բան, մի տեսակ տարօրինակ կլինէր կապել այն շարժումը, որ ուղղւած է կեանքի ապագայ ձևերի իրականացմանը, այնպիսի հասարակական տարբերի հետ, որ դատապարտւած են մեռնելու և կորչելու: Ներկայ հայեացքների համաձայն՝ մանր գիւղացիութեան, ուր աւելի ու աւելի գալիս է նոյնանման դասակարգային անտագոնիզմի», սօցիալիստական շարժման մէջ քաշելը ոչ միայն միանգամայն տրամաբանական է, այլ և կազմում է ուղղակի պատմական անհրաժեշտութիւն: Ահա այն էական տարբերութիւնը, որի գոյութիւնը այժմ պէտք է արձանագրել, սօցիալիստական շարժման զարգացման պայմանների նախկին հասկացողութեան միջև մի կողմից և միւս կողմից այն հասկացողութեան, որը համապատասխանում է արևմտա-եւրոպական արդիւնաբերական երկրների տնտեսական զարգացման իսկական ընթացքին և որը Ռուսաստանի վերաբերմամբ ուս սօցիալիստական շօշուփ միանգամայն որոշեց:

Նախկին հասկացողութեան համաձայն սօցիալիստական շարժման ծանրութեան կենտրոնը տեղափոխւում էր ինդուստրիայի և մասամբ գիւղատնտեսական պրօլետարիատի միջավայրը, իսկ մանր գիւղացիական մասսաները աւելի կամ պակաս մի կողմի


էին թողնւում: Սրա հետ միասին, շնորհիւ այն բանի, որ խոշոր արտադրութիւններում զբաղւած բանւորական մասսաները խոշոր չափով կազմակերպւում ու խտացնւում են իրենց շարքերը հէնց կապիտալիստական արտադրութեան շնորհիւ և նրանից ստանում են, այսպէս ասած, ապագայ կօլլեկտիւիստական կազմի արտաքին պատրաստի շրջանակները և հետևաբար համաձայն սրան նւագեցնում էր նոյնպէս և այս բանւորական մասսաների վերագրեալ, սօցիալիստական պրօպագանդի կազմակերպող ստեղծագործական դերը, գաղափարական ազդեցութեան նշանակութիւնը այստեղ կարծես թէ նահանջում էր երկրորդ տեղը:

Սօցիալիստական շարժման զարգացման պայմանների նորագոյն հասկացողութեան համաձայն նրա նշանակութիւնը չի կայանում միայն պրօլետարիատին յեղափոխականացնելու մէջ, այդ առաջին քայլին պէտք է հետևի միւսը, որ ենթադրում է սօցիալիստական գիտակցութեան տարածումը գիւղացիական բանւորական մասսաների միջև և նոցա իրենց նւագագոյն սօցիալիստական ազրարային ծրագրի պաշտպանումը, իբրև անցողակի ու անմիջապէս—իրագործելի պահանջներ, որ համապատասխանում են քաղաքային բանւորական շարժման մօտագոյն պահանջներին: Եւ իւրաքանչիւր երկրի բանւորական դասակարգի ընդհանուր կազմի մէջ գիւղացիական ունեցած յարաբերական չափի համաձայն, այնտեղ կփոխւի, ի հարկէ նոյնպէս և գիւղացիական սօցիալիստական շարժման յարաբերական դերը:

Որովհետև Ռուսաստանի մանր գիւղացիութիւնը, շնորհիւ այն բանի, որ նա ազատեց ճորտութիւնից ոչ թէ յեղափոխական, այլ միապետական ճանապարհով, միանգամից ընկաւ «պրօլետարացած մանր տնտեսութեան պայմանների մէջ, չանցնելով, ինչպէս օր. Ֆրանսիական գիւղացիութեան, աւելի կամ պակաս տեական մանր բուրժուական շրջան, այդ պատճառով էլ սօցիալիստական շարժման մէջ գիւղացիութեան դերի հարցը մեր կեանքում գրեց աւելի պարզ կերպով, քան արևմտա-եւրոպական արդիւնաբերական երկրներում և Ռուսաստանում կապիտալիստական զարգացման առանձնակի պայմանների պատճառով գիւղացիական հարցը մեզանում ստացել է առանձնապէս կարևոր նշանակութիւն մեր սօցիալիստական շարժման ընդհանուր զարգացման մէջ: Համապատասխան այս բանի, շարժման գուտ-պրօ-

լիտարական շրջանը, որը մարքսիստական ուղղափառութիւնը կամենում էր սկզբունք գարձնել. երբէք չէր կարող Ռուսաստանում ստանալ այնպիսի բացարձակ գերակշռութիւն, ինչպէս արեւմտեան Եւրոպայում. մեզանում օրթօլօքս—մարքսիստական հոսանքը միշտ հակառակութեան էր հանդիպում: Չերնիշևսկու Լաւրովի ուս սօցիալիստական շիօլայի հետևողների կողմից:

90-ական թւականների վերջից այդ շիօլայի գաղափարները բայն ծաւալ ընդունեցին շնորհիւ սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան գործունէութեան, որ իբր հիմնական կէտ իրենց ծրագրի գրին հողի սօցիալիզացիան (համայնացում):



1875

1875

